



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՍՏԵԱՆ ԹԵՍԻ  
WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**Archbishop Moushegh Mardirossian, Prelate**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱշԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ  
ՅԱՆՉԱԽԱՆՈՒՄԲԻ ԿԱՇՄՎԿԵՐՊՈՒԹԵԱԿԱԲ

## **ԸՆՈՐԴԱՅԱՆԴԵՍ՝ ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻ «ԱՆՄԵԴ ՄԵՂԱՊԱՐՏԸ՝ ՊԱՏԱՐԱԳ» ՀԱՏՈՐԻՆ**

Յայ գրասեր ու մշակութասեր հասարակութիւնը Զորեքշաբթի, 19 Յուլիսի երեկոյեան յիշատակելի ժամադրութիւն մը ունեցաւ մեր ժամանակներու ամեն վաստակաշատ ու քրիստոնէաշունչ բանաստեղծներէն ժագ Ս. Յակոբեանի հետ, անոր նորագոյն հատորին՝ «Անմեդ Մեղապարտը՝ Պատարագ» գրքոյկին շնորհահանդեսին առիթով։

Գեղարուեստական-մշակութային նկարագիրով երեկոյթը կազմակերպուած էր Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի Յանրային Յարաբերական յանձնախումբին կողմէ եւ տեղի ունեցաւ Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Արմենակ Տեր Պետրոսեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Ներկայութեամբ մօտաւորապէս 200 հաւատացեալներու ու գրասերներու Ներկայ էին Ազգային Վարչութեան անդամներ, հոգաբարձութեանց Ներկայացուցիչներ, Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող միաւորներու անդամներ եւ այլ Ներկայացուցչական դեմքեր։

Երեկոն կրկնակիօրէն յիշատակելի եղաւ, որովհետեւ նոյն օրը բանաստեղծին տարեդարձն էր...

### **ԲԱՑՈՒՄ**

Յոգեւոր գրականութեան նուիրուած երեկոյթի մը բնոյթը զգեցած շնորհահանդեսը սկսաւ ժամը 7:45ին, հաւաքական Տերունական աղօթքով։ Յանդիսավարը՝ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւներէն Արք. S. Արտակ Քիևյ. Տեմիրեան Ներկաները հրաւիրեց մեկ վայրկեան յոտսկայս լուսամբ յարգելու յիշատակը Լիբանանի մէջ վերջին մեկ շաբթուան արիւնահեղութեանց զոհ գացած անմեղներուն։ Ապա, ան հակիրճ կերպով բացատրեց այս ձեռնարկին բնոյթը, զայն գետեղելով Ազգային Առաջնորդարանի քրիստոնէական դաստիարակութեան ու մշակոյթի տարածման նախաձեռնութիւններուն ծիրին մէջ, մանաւանդ որ այս ու նմանօրինակ ձեռնարկներ կ'իրականացուին քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին հետ գործակցաբար։

### **ՀԱՏՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

Նորածին հատորին ներկայացումը կատարեց Ազգ. Առաջնորդարանի քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերապ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, որ բանաստեղծական շունչով ներբողեց բանաստեղծն ու անոր հաւատքին նորագոյն արտայայտութիւնը եղող այս գործը:

Յայր Միւռոն առաջին հերթին ներկայացուց հատորին ընդհանուր բաժինները. շուրջ 80 Եջերու վրայ տարածուող հատորը լոյս ընծայուած է Մեծի Տանն Կիլիկյ Կաթողիկոսութեան հրատարակչատուններ եւ ունի երեք գլխաւոր բաժիններ. Ա.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ բանաստեղծին ուղղուած նամակ մը, որ կը ներկայանայ իբրեւ յառաջարան, նոյնինքն Ս. Պատարագի խորհուրդն բխող խորհրդածութիւններու բաժին մը, որ հատորին հիմնական մասն է, եւ սիւթին առնչուող շարք մը բանաստեղծութիւններ, որոնք քաղուած են հեղինակին նախկին բանաստեղծական հատորներէն:

Վեհափառ Յայրապետը իր օրինութեան ու ողջոյնի խօսքին մէջ դրուատիքով ու գևահատանքով կ'արտայայտուի հեղինակին տասնամեակներու վրայ տարածուած հոգեմտաւոր ստեղծագործութիւններու վաստակին մասին, որ արտայայտութիւն մըն է քրիստոնեական հաւատքի եռթեան, ու կը մաղթէ որ Աստուած անոր ընծայէ իր ստեղծագործութիւնները բազմացնելու նորանոր առիթներ:

Խօսելով հատորին բովանդակութեան մասին, Յայր Միւռոն յայտնեց, թէ անիկա կը զարգանայ Ենթախորագիրներով, որոնց մէջ հեղինակը, աստուածաշնչային վկայութիւններով, մէջբերումներով ու մեր սրբազան հայրերու մտածումներուն օժանդակութեամբ շերտ առ շերտ կը բացատրէ Աստուածորդուոյն աշխարհ առաքելութեան ու մարդկութեան համար՝ մարդուն մեղքերու քաւութեան համար պատարագ՝ զոհ դառնալու իմաստը: Առաջին երեք բաժիններով, հեղինակը կը ներկայացնէ Յայր, Որդի եւ Ս. Յոգի երրորդութեան միասնութեան ու լրացուցիչ դերակատարութեանց մասրամասնութիւնները, ուր Յայրը կը ներկայանայ իբրեւ մարդկութիւնը անհունօրէն սիրող ստեղծագործ, որ մեղաւոր մարդուն փրկութեան համար ոչինչ կը խնայէ ու մինչեւ իսկ իր շատ սիրելի Որդին աշխարհ դրկեց, որպեսզի, անմեղ ըլլալով հանդերձ՝ իր ուսերուն առնէ մարդկութեան մեղքերուն բերը ու ծանրագոյն չարչարանքով, խաչ բարձրանալով քաւութեան նոխազ դառնայ, փրկէ մարդկութիւնը: Յիսուսի աշխարհ առաքելութեան ու վերանորոգած ուղղին յատկացուած բաժինին կը յաջորդէ մարդը հմաստնացնող, գիտակից դարձնող Ս. Յոգին դերակատարութիւնը բացատրող բաժինը, ապա, հատորը կը զարգանայ Աստուածոյ եւ մարդուն յարաբերութեանց բացատարականներով, ուր Աստուածորդին կը ներկայանայ իբրեւ մարդուն ու իր ստեղծիչը իրառու կապող, անոնց միշեւ հաշտութիւն հաստատող կամուրջ: Իր բացատրութիւններուն յաւելեալ լուսաբանման ու հաստատաման համար, Յայր Սուրբը կարճ հատուածներ ընթերցեց հատորին Եջերէն:

Իր խօսքին վերջին բաժինով, Յայր Միւռոն անդրադարձաւ հատորին բանաստեղծական թռիչքին, գեղեցիկ բառամթերքին ու մանաւանդ քրիստոնեական հաւատքի գեղեցիկ արտայայտութիւն մը ըլլալու արժանիքներուն մասին, նկատելով, որ հեղինակը բանաստեղծական շունչով զրոյց կը կատարէ ինքն իրեն ու ընթերցողին հետ: Ան մաղթեց, որ ընթերցողները վայելեն հեղինակին իրաքանչիւր են ու տողը:

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Զեռնարկը ուներ նաեւ գեղարուեստական բաժին: Բանստեղծը, իր հաղորդական ու տպաւորիչ ոճով ընթերցումներ կատարեց հատորի արձակ ու չափածոյ էջերեն, լրացնելով Յայր Սուրբին կողմէ կատարուած ներկայացումն ու ունկնդիրներուն հետ հաղորդակցութիւնը:

Արուեստագետ Երգչուիիներ՝ Յեղիսէ Յարապյեան եւ Յերմիսէ Ամիրեան մեր Եկեղեցական Երաժշտութեան գոհարներեն սիրայօժար մատուցումներով գեղարուեստական այլ խորք մը տուին ծեռնարկին: Երգչուիիներուն՝ դաշնակի վրայ ընկերացաւ Փրոֆ. Լեւոն Աբրահամեան:

## ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Երեկոյթի եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը, որ իր խօսքին համար բնաբան վերցուցած էր մեր Սրբազան Յայրապետներէն Յովիան Մանդակունիի մեկ խօսքը: Նկատել տալով, որ Ժագ Յակոբեան մանսագիտութեամբ դեղագործ է, Առաջնորդ Սրբազանը, Մանդակունի Յայրապետի խօսքերուն հետեւողութեամբ, յայտնեց, թէ բանաստեղծը, մարդոց Ֆիզիքական ցաւերը դեղերով ամոքելէ ետք, նաեւ իր հոգեշունչ գրիչով ու քրիստոնեական հաւատքին տարածումով դարձած է հոգիներու ցաւերուն դարման բերող առաքելատիա նուիրեալ, յիսուսահար դարձնելով ինքինք ու իր ընթերցողները: Ան գոհունակութիւն յայտնեց այս Երեկոյթին համար, որ ներկաներուն առիթ ընծայեց յիսուսաբոյր մթնոլորտ մը ապրելու:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ Ազգ. Առաջնորդարանի Յանրային Յարաբերական յանձնախումբին աշխատանքին, գեղարուեստական յայտագիրին մասնակիցներուն ու գիրքին ներկայացումը կատարող Յայր Միւռոնին ներդրումներուն մասին, վեր առնելով այս իրողութիւնը, որ յայտագիրին իւրաքանչիւր բաժինը իր տեղը ունեցաւ բանաստեղծին մտածումներու եւ հաւատքի աշխարհին հետ հաղորդակցութեան հաստատման իմաստով:

Իր կարգին խօսելով Աստուածորդոյն առաքելութեան ու գոհաբերութեան վերաբերող գիրքի պատգամին մասին, ան ըսաւ, որ իւրաքանչիւր անգամ որ Ս. Պատարագ տեղի կ'ունենայ, մեզի առիթ կ'ընծայուի մտածելու եւ հաղորդակից դառնալու Ս. Պատարագի խորհուրդին ու մեր կեանքերուն մէջ անոր իմաստաւորման իրամայականին: Առաջնորդ Սրբազանը Նկատեց, որ հեղինակը ոչ միայն լաւապէս ըմբռնած է Ս. Պատարագի խորհուրդը եւ Յիսուսի գոհաբերութեան իմաստը, այլ նաեւ դարձած է անոր բանաւոր ու գրաւոր շեփորահարը, անոր նուիրելով իր գրիչն ու միտքի արգասիքները: Ան է բանաստեղծ, քարոզիչ ու աստուածաբան, եւ այս արժանիքներուն արտայայտութիւնն է «Անմեղ Մեղապարտը՝ Պատարագ» հատորը:

Իր խօսքի վերջին բաժինով, Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ հանդիսավար Տէր Յօր ու Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին մասին, Նկատի ունենալով, որ վերջինը կոկիկ հիւրասիրութիւն մը կազմակերպած էր յայտագիրի պաշտօնական բաժինի աւարտին:

## ԲԱՐԻ ՏԱՐԵԴԱՐՁ

Յայտագիրը փակուեցաւ Սրբազն Յօր Պահպանիչով, սակայն ուներ անակնկալի բաժին մը: Արդարեւ, բանաստեղծին նախկին աշակերտները կարկանդակ մը պատրաստած էին, որովհետեւ նոյն օրը ժագ Յակոբեանի ծննդեան տարեդարձն էր: Կարկանդակին մատուցումը կատարուեցաւ «Աշակերտք Քրիստոսի» շարականին երգեցողութեամբ ու բարեմաղթութեանց փոխանակումով:

Այսուհետեւ, ներկաները հիւրասիրուեցան կոկիկ սեղանով մը, մինչ բանաստեղծը կը մակագրե գիրքն օրինակներ:

ORGANIZED BY THE WESTERN PRELACY PUBLIC RELATIONS COMITTEE

**BOOK PRESENTATION OF “THE INNOCENT CONVICT, BADARAK”  
BY JACQUES HAGOPIAN**

On the evening of Wednesday July 19, a presentation of Jacques Hagopian's latest book, "The Innocent Convict, Badarak", took place at the Armenak Der Bedrossian Hall of St. Mary's Church in Glendale. The event, under the auspices of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was organized by the Western Prelacy Public Relations Committee. Over 200 guests were in attendance, as well as members of the Prelacy Executive Council, representatives of Board of Trustees, and members of various community organizations.

The evening was doubly memorable since it coincided with the poet's birthday.

The event began with the recitation of the Lord's Prayer, followed by a moment of silence for the lives lost in Lebanon within the past week. Master of Ceremonies Rev. Ardag Demirjian of St. Mary's Church welcomed the guests and gave a brief description of the nature of the event.

Very Rev. Fr. Muron Aznikian, Co-Director of the Prelacy Christian Education Department presented the book by its three parts. The book was published by the Catholicosate of the Great See of Cilicia. His Holiness Catholicos Aram I, wrote a letter of commendation to Mr. Hagopian, which was used as the prologue. The book, through the presentation of the mystery of the Holy Badarak, essentially manifests the love of God, the sacrificial and redemptive act of the Son of God, Jesus Christ, and the comforting role of the Holy Spirit.

During the event guests also enjoyed an artistic program led by Mr. Hagopian reading excerpts from his book, and soloists Heghine Harboian and Hermine Amirian, accompanied by Prof. Levon Aprahamian on the piano.

Closing remarks were delivered by the Prelate. He mentioned how Mr. Hagopian is a pharmacist by profession and remarked that as a pharmacist he would relieve the physical pain of his patients with medicine but he relieves their spiritual pain with his inspirational poems. The Prelate then expressed his gratitude for the evening, and commended the work of the Public Relations Committee, the participants of the artistic program, and the insight given by Very Rev. Fr. Aznikian.

Speaking of the book's message regarding Christ's mission and sacrifice, the Prelate related it to the message of the Badarak that takes place every Sunday and its

significance in our lives. He stated that the poet has not only expertly grasped the meaning of the sacrament of Badarak and Christ's sacrifice, but has in addition become a herald for it, dedicating his writings to the topic.

Lastly, the Prelate commended Rev. Demirjian and the Prelacy Ladies Auxiliary for the reception they had prepared.

The official portion of the program ended with the Bahbanich prayer by the Prelate. However, there was a pleasant surprise. Being as though it was Mr. Hagopian's birthday, one of his previous students had made a birthday cake for him.

The guests then enjoyed the reception while the poet signed copies of his book.